

Եւ ի ներս մտեալ տեսաք զարմանալի շի-
 45 նուածս եւ կամարս : Եւ բուն չորս կողմ եկե-
 ղեցուն զուտր ոսկով եւ լաճվարթով փու-
 սուսի զամենայն տնօրինականքն Քրիստոսի
 եւ սրբոց՝ զանազան զեղօք : Եւ յաւագ խո-
 րանին առջեւն երթեալ երկրպագեցաք Աս-
 50 տուծոյ եւ սուրբ Աւետարանչի . մեղաց թո-
 զութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցելոց :
 Եւ մատեաք յառաջ, ուր էր մարմինն Մար-
 կոսի ի մատուռ մի, որ էր ի սպիտակ եւ ազ-
 նիւ մէրմէրէ եւ անգիւտ . խուպայ էր շինած
 55 ի վերայ իրեք սեան, զի ասնն թէ ոսկոյ սա-
 րապար է . եւ ի գիշերի լոյս տան առաւել քան
 զեանարտաշն : Եւ զուպպին վերեւն հանած
 էր սաֆի ոսկով զսուրբն Մարկոս, որ տե-
 սողքն պշուցեալ հայէին եւ բերանարաց լի-
 60 նէին : Նաեւ գետինն ամէն փուսուսքէրի էր :
 Եւ զինչ աշխարհս եղել զնացել, անդր տեսա-
 նես . այլ եւ որչափ կենդանի կայ աշխարհս,
 թէ գազան, անասուն, թռչուն, անդ գտա-
 նես : Իսկ խէտումէտ մէրմէոնուն աչքն մար-
 65 դուն խամաշմիչ կու լինէր եւ չի խմիչէր
 մարդ կոխել զայնպիսի բաղմահնար արվեստն
 իմաստնոց, զոր այժմ ոչ ոք կարէ առնել
 զայն :

Եւ ասին թէ Սա Մարքոյին խաղնին հէ-
 70 սէր եւ համար չկայ . զի անթիւ է զանձն եւ